№ 145 Հոկտեմբերի 7 Ուրբաթ 1883 Հոկտեմբերի 7 Ուրբաթ № 145

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Նորին կայսերական Մեծութեան Պալատի Սենեկապետ, Դէյստվիտէլնի Ստաստկի Սովէտնիկ իշխան ԵԱԶՕՆ Դմիտրեան ԹՈՒՄԱՆՕՎԻ աղգականները յայտնում են նրա բարեկամներին և ծանօթներին, որ հոկտեմբերի 2-ից սկսած, ամեն օր, ժամը 6-ին երեկոյեան, Հանգուցեալի բնակարանում կատարվելու է այդ։

ԲԺՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ.
ԿԱՆԱՆՑ հիւանդութիւններով առաւօտները 10-ից մինչև 12 ժամը։
Տղամարդկերանց ՆԵՐՔԻՆ և ԿՈԿՈՐԴԻ հիւանդութիւններով երեկոյեանները 5-ից մինչև 7 ժամը։
ՍԵՐԳԻԵՎՍԿԻ փողոց, ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑԻ տունը՝ համար 6։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տուրգենեվի թաղումը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծեր»։

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ԹԱՂՈՒՄԸ

Հանգուցեալ Ի. Ս. Տուրգենեվի թաղման վերաբերութեամբ „Русск. Вѣд." լրագիրը ստացել է Պետերբուրգից, սեպտեմբերի 27-ին, մի ընդարձակ հեռագիր, որից քաղում ենք հետևեալը. „Օրը շատ պայծառ էր, իսկ ամառնային. ահագին ժողովուրդ խառնել էր երկաթուղու կայարանը։ Տաններորդ ժամին պսակները որոշված կարգով դասաւորեցին. պսակների և թէ պատգամաւորների թիւը 200-ից աւելի էր։ Արտաքին կարգը բացառապէս պահում էին մատենագիրները և փաստաբանները։ Հանդիսական ժողովուրդը կանգնած էր մի կողմը, նրան իրաւունք չէր տուած խառնվել յուղարկաւորութեան հետ։ Երկաթուղու կայարանում գտնվում էին միայն կարգադրողները, քաղաքապետ Գրէսսեր, նահանգական ազնուականների առաջնորդը և քաղաքային խորհուրդը 150 իրաւասուներով։ Մուտքը պատած էր սև, մթին վարագոյրներով։ Դահլիճում հաւաքված էր հոգևորականութիւնը։ Ժամի 11-ին, երկաթուղու գնացքը մօտենալուն պէս տրվեցաւ յուղարկաւորութեան սկսելու նշանը։ Դագաղը դրած էր մի փառաւոր արկղում։ Դագաղի եռևը տանում էին պրաստահմանի պսակները—Վիսրդօի ընտանիքից, դեսպան Օրլովից, Ֆրանսիական, գերմանական գրողներից և այլն։ Դագաղը ձեռքերի վրա դուրս բերին Ստասիւլեվիչ, Կրաեվսկի, Տաղանցեվ, Մոգեստով, Կավելին, Գրիգորովիչ, Պլեշչեև և այլք։ Մեռելակառքում լծված էին վեց ձի, Ջայլամի փետուրներով զարդարված, ոսկէ ամպհովանիով։ Յուղարկաւորութեան առաջին տեղը գնում էր քաղաքապետը ձիով, նրա յետևը՝ կարգադրողները, և յետոյ պատգամաւորութիւնները։ Առաջին պատգամաւորութիւնը բաղկացած էր 17 գիւղացիներից. սրանց ահագին պսակը ունէր հետևեալ մակագրութիւն „Ձորաերից—Տուրգենեվին". սրանից յետոյ գնում էին 92 պատգամաւորութիւններ, ուսումնական և ուսումնարանական ընկերութիւններից և հիմնարկութիւններից։ Պսակներից առաւելապէս նշանաւոր էին Մոսկվայի համալսարանի կողմից ուղարկած արծաթէ մեծ պսակը թաւշեայ բարձի վրա, Պետերբուրգի համալսարանի և կանանց կուրսերի պսակը 400 ուսանողների ուղեկցութեամբ, մակագրված. „սէրը աւելի ուժեղ է մահից" և այլն։ Երկրորդ կարգի պատգամաւորութիւնները և պսակները զանազան հասարակական հիմնարկութիւններից և դասակարգերից էին. առաւելապէս դրանց մէջ աչքի էին ընկնում „հին Նովգորոդից — Տուրգենեվին" պսակը, Թիֆլիսի պատգամաւորութիւնը տեղական, ազգային շորերով և այլն։ Դրանցից յետոյ գնում էին Պետերբուրգի խմբագրութիւնների կողմից նշանակած պատգամաւորութիւնները։ Դրանց չորս կողմը 50,000-ից աւելի ժողովուրդը $2^1/_2$ վերստ երկարութեամբ շրջան էր կազմել։ Գերեզմանի մօտ կարձեցին պատգամաւորների թիւը, ամենից 6 հոգի ընտրելով։ Եկեղեցուց դագաղը դուրս բերին նշանաւոր գրողներ։ Առաջին ճառը արտասանեց Պետերբուրգի համալսարանի ռեկտոր Բեկետով։ Կարճ ճառի մէջ Տուրգենեվը համեմատվում էր պլանիտարիայի ա՛յն աստղի հետ, որը իր լոյսը ուղարկում է մինչև անգամ իր անյայտանալուց յետոյ էլ։ Երկրորդ ճառը արտասանեց Մոսկվայի համալսարանի ներկայացուցիչ Մուրոմցեվ։ Նա խօսեց հանգուցեալի բարոյական և հասարակական ձգտումների և իդէալների ներդաշնակութեան վրայ, ակնարկեց թէ հանգուցեալը ինչ դեր ունեցաւ ռուսաց մտքի զարգացման մէջ և վերջացրեց երեք անգամ զգացված շնորհակալութիւն ուղարկելով մեծ աշակերտին alma mater։

Այնուհետև խօսեց յուզված և սրտաշարժ կերպով Գրիգորովիչ։ Նա յիշեց հանգուցեալի Յարութիւնը, Ծերենցի քահանան (?) և չը գիտեմ այլ ևս ովքեր, նոյնպէս ճառեր են խօսացել։ Շատ լաւ են արել։ Խիստ սակաւ ռոմաններ կարող են պատահել, որի մէջ հերոսներից մէկը մի որ և իցէ ճառ ասած չը լինի։ Եթէ պ. Հայկունին կամենում է ցոյց տալ, որ Կարօի ճառը Բաֆֆին առել է մի ուրիշ գրվածքից, աւելի լաւ կանէր, որ Կարօի ճառը նոյնութեամբ արտատպէր և նրա հանդէպ դնէր միւսը, որտեղից վեր է առել Բաֆֆին։ Այն ժամանակ մենք «Կայծերի» հեղինակի վարմունքը կը համարէինք գրականական գողութիւն։ Բայց քանի որ այդ չէ արել պ. Հայկունին, մենք նրա ասածը կը համարենք բամբասանք, և աւելի ոչինչ։

Մի այլ օրինակ ևս։ Այստեղ պ. Հայկունին կատարեալ իդիոտութեան է հասնում։ «Կայծերի» մէջ Բաֆֆին նկարագրում է մի հայոց տուն (եր. 20)։ Պ. Հայկունին ասում է, թէ Պուշկինն էլ ունի մի տան նկարագրութիւն «Հայի խնդրի» մէջ։ Պ. Հայկունին կամ իր կեանքում մի երկու հայերն վէպ է կարդացել և ամեն անգամ դիմում է այդ վէպերին, կամ եթէ չատ է կարդացել, ուրեմն պէտք է նկատած լինէր, որ բոլոր ազգերի գրականութեան մէջ չէ կարելի ցոյց տալ մի վէպ, որի մէջ տան նկարագրութիւն չը լինէր։ Ցայտնի բան է, ուր մարդիկ են ապրում, այնտեղ էլ տուն կը լինի։

Պ. Հայկունին իր այդ և դրա նման նկատողութիւնների մէջ փոքր է մնում, որ ասէ, թէ Բաֆֆին «Կայծերի» ամբողջ գործողութիւնները առել է ուրիշ վէպերից, որովհետև այստեղ էլ մարդիկ ուտում են, խմում են, խօսում են, պառկում են, այստեղ էլ մարդիկ երկու աչք, երկու ոտ ունեն։ Եւ այդ բոլորը նա համարում է կրիտիկա։

Այժմ դառնանք այն կէտերին, որոնցմով պ. Հայկունին «Կայծերի» մէջ անբնական երևոյթներ և գործողութիւններ է ցոյց տալիս։

Ֆարհատը և Մարօն սենեակի մէջ մէկ մէկու հետ խօսում են. այդ միջոցին բակից լսելի է լինում շան կընձկընձոցի ձայնը։ Օրիորդը և Ֆարհատը սենեակից դուրս են վազում, որ տեսնեն ինչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՒ «ԿԱՅԾԵՐԸ»

—

Այժմ դառնանք դէպի պ. Հայկունու այն նըկատողութիւնները, որոնցմով ցոյց է տալիս, թէ Բաֆֆին «Կայծերի» զանազան տեղերը առել է այս և այն գրվածքից։ Բայց նախ քան նրա նկատողութիւնների վրա խօսելը, պէտք է հասկանալ թէ ինչ է նշանակում գրական գողութիւն։ Այդ մասին ևս կը բերեմ Սարդուի խօսքերը, որին չատ ժամանակ չէ որ մեղադրում էին գրականական գողութեան մէջ։

Խօսելով գրականական սեպհականութեան մասին, ասում է նա՝«Այդ հարցի վճռելը չատ դժուար է, թէև նոր չէ։ Ահա երկու հազար տարի է, որ նա հերթի վրա է, և հասարակական կարծիքը միշտ քննում է նրան մի և նոյն կերպով։ Իրաւ է, գտնվել են մարդիկ, որոնք ասել են, թէ գրականական սեպհականութիւնը գտնվում է միայն այնտեղ, որտեղ կայ ստեղծագործութիւն։ Այդ նշանակում է լուծել հարցը մի նոր անլուծանելի խնդիրով, որովհետև, նախ և առաջ, պէտք է լուծել, թէ ինչ է ստեղծագործութիւնը։ Միւսները ասում էին. «Շատ հասկանալի է, դուք ստեղծում էք մի մեծ աշխատութիւն. ոչ ոքի խելքին չէ գալիս փոխակերպել նրան,—ահա հէնց այստեղ է ձեր գրական սեպհականութիւնը»։ Ի հարկէ, լաւ խորհուրդ է, բայց դժուար է կատարելը։ Երրորդները գրում էին. «Գրականական սեպհականութիւն։ Բայց դա ամենևին չը կայ»։ Այդ պ. պ. Վէյսի, Սարսէի և Ֆուկիէի կարծիքն է։ Բայց դա—իմ կարծիքը չէ։ Ես հաստատ հաւատ ունեմ գրականական սեպհականութեան մասին, բայց ես հաւատում եմ ճշմարիտ գրականական սեպհականութեանը։ Գրականական սեպհականութիւնը է այն ինքնուրոյն, առանձին ձևը, որը մատենագիրները կամ արհեստագէտները կարողանում են տալ ընդհանուր գաղափարին։ Այդ որոշումը ինձ չէ պատկանում, այլ պատկանում է բոլորին։ Եւ ինչպէս կարող է այլ կերպ լինել։ Մարդկութիւնը միշտ մի և նոյնն է։ Նա անվերջ կերպով ինքն իրան կրկնում է։ Այստեղ դուք միշտ հանդիպում էք մի և նոյն կրքերին, մի և նոյն ծիծաղելի կողմերին, մի և նոյն մոլութիւններին։ Դրաման կամ կօմէդիան (բացառութիւն չեն կազմում և վէպերը) որ օգուտ են քաղում այդ կրքերից, ծիծաղելի կողմերից, մոլութիւններից, ստիպված են պատոյտ գալ մի և նոյն կախարդված շրջանի մէջ։ Այդ պատճառով, մեր ժամանակի մատենագիրները կամ արհեստագէտները անում են այն, ինչ որ արել են նրանց նախորդները, միայն այն կերպարանափոխութիւններով, որոնք պայմանաւորվում են հասարակական կեանքով, լեզուով, բարք ու վարքով և այլն։ Իսկ էութեան մէջ, չը նայելով ձևերի զանազանութեանը,—էութիւնը մնում է մի և նոյնը։ Համլէտը—դա Օրէստն է, Օրօսմանը—Օտելլոն է, Գրանդոնը—Հարպագոնն է... այսինքն, միշտ—սէր, խանդոտութիւն, ամուսինների անհաւասարմութիւն, ժլատութիւն,—մի խօսքով, միշտ մի և նոյն մարդկութիւնը։ Բայց ամեն մէկը օգուտ է քաղում այդ ընդհանուր գաղափարներից իր ձևով։ Թէև էութիւնը միշտ մի և նոյնն է մընում, բայց ձևը կարող է փոփոխվել անվերջ կերպով, հեղինակի իսկական և սեպհական դրոշմի շնորհիւ, որը նա տալիս է ընդհանուր գաղափարին, և բոլորովին մաշված սիւժէից նա կարողանում է ստեղծել մի նոր և ճշմարիտ ինքնուրոյն աշխատութիւն։ Եւ այդ է գրականական սեպհականութիւնը։ Նա կայանում է ոչ թէ գաղափարի մէջ, որից մատենագիրը օգուտ է քաղում, այլ նրա մէջ, թէ ինչ է շինում նա այդ գաղափարից։ Եւ այսպէս, գաղափարը, սիւժէտը պատկանում է ամենին, իսկ ձևը պատկանում է ամեն մի մատենագրին առանձին կերպով»։

Կեանքի մէջ կատարվող այս և այն հասարակական երևոյթը ամեն մի գրողի սեպհականութիւն է, ամեն ոք իրաւունք ունի նրանցից օգուտ քաղել, և իր ցանկութեան համեմատ նրանց ձև ու կերպարանք տալ։ Եւ այդ պատճառով, աղգերի գրականութեան մէջ չը կայ և չէ կարելի ցոյց տալ կեանքի այս և այն երևոյթներից գոնէ մէկը, որի վրա հաղարաւոր գրողներ ուշադրութիւն դարձրած չը լինէին, և իրանց աշխատութեան նիւթ չինած չը լինէին։ Բայց դրանցից ամեն մէկը նկարագրում է իր ձևով։ Իսկ պ. Հայկունին, ի հարկէ, այդ պայմանները հասկանալ չէ կարող, մանաւանդ, որ նա իրան նպատակ է դրել ցոյց տալ, որ «Կայծերի» մէջ նոր բան չը կայ։

Օրինակ, «Կայծերի» հերոսները մի կռիւ են ունեցել մի կիրճի մէջ քրդերի հետ (եր. 248—253)։ Ծերենցի հերոսներն ևս մի կռիւ են ունեցել մի կիրճի մէջ արաբացիների հետ։ Պ. Հայկունին աշխատում է հասկացնել, որ Բաֆֆին այդ կռիւի նկարագրութիւնը սովորել է Ծերենցից։ Բաֆֆին ամենևին պէտք չունէր Ծերենցից բան սովորելու քանի որ Ծերենցի գրքի լոյս տեսնելուց առաջ մի նոյնպիսի կռիւի նկարագիր Բաֆֆին պատկերացրել է իր «Ջէլալէդդինի» մէջ։ Բացի դրանից, «Դաւիթ-բէկի» մեծ մասը զանազան ռազմական և պատերազմական նկարագիրներ են։ Եթէ Բաֆֆին պէտք լիներ գաղափար կազմել այս տեսակ կռիւների մասին, աւելի շուտով կուսումնասիրէր յունաց պատմութեան այն տեղը, ուր Լէօնիդաս մի կիրճի մէջ 300 հոգով ընդդիմացաւ պարսից բազմաթիւ զօրքերին։ Հարիւրաւոր ռոմաններ կարելի է ցոյց տալ եւրոպական գրականութիւնից, որոնց մէջ կան զանազան կռիւների և մենամարտութիւնների նկարագրութիւններ։ Բայց այդ ռոմանների կրիտիկոսները չատ ծիծաղելի կը լինէին, եթէ ասէին, թէ հեղինակները գողացել են միմեանցից, քանի որ, իւրաքանչիւրը առանձին կերպով է նկարագրում իր հերոսի կռիւի հանդէսը։

Մի այլ օրինակ. «Կայծերի» հերոսներից մէկը, Կարօն, մի ճառ է խօսացել (197-201)։ Պ. Հայկունին ասում է, թէ Աբովեանի Աղասին, Աղայեանցի Յարութիւնը, Ծերենցի քահանան (?) և չը գիտեմ այլ ևս ովքեր, նոյնպէս ճառեր են խօսացել։ Շատ լաւ են արել։ Խիստ սակաւ ռոմաններ կարող են պատահել, որի մէջ հերոսներից մէկը մի որ և իցէ ճառ ասած չը լինի։ Եթէ պ. Հայկունին կամենում է ցոյց տալ, որ Կարօի ճառը Բաֆֆին առել է մի ուրիշ գրվածքից, աւելի լաւ կանէր, որ Կարօի ճառը նոյնութեամբ արտատպէր և նրա հանդէպ դնէր միւսը, որտեղից վեր է առել Բաֆֆին։ Այն ժամանակ մենք «Կայծերի» հեղինակի վարմունքը կը համարէինք գրականական գողութիւն։ Բայց քանի որ այդ չէ արել պ. Հայկունին, մենք նրա ասածը կը համարենք բամբասանք, և աւելի ոչինչ։

Մի այլ օրինակ ևս։ Այստեղ պ. Հայկունին կատարեալ իդիոտութեան է հասնում։ «Կայծերի» մէջ Բաֆֆին նկարագրում է մի հայոց տուն (եր. 20)։ Պ. Հայկունին ասում է, թէ Պուշկինն էլ ունի մի տան նկարագրութիւն «Հայի խնդրի» մէջ։ Պ. Հայկունին կամ իր կեանքում մի երկու հայերն վէպ է կարդացել և ամեն անգամ դիմում է այդ վէպերին, կամ եթէ չատ է կարդացել, ուրեմն պէտք է նկատած լիներ, որ բոլոր ազգերի գրականութեան մէջ չէ կարելի ցոյց տալ մի վէպ, որի մէջ տան նկարագրութիւն չը լիներ։ Ցայտնի բան է, ուր մարդիկ են ապրում, այնտեղ էլ տուն կը լինի։

Պ. Հայկունին իր այդ և դրա նման նկատողութիւնների մէջ փոքր է մնում, որ ասէ, թէ Բաֆֆին «Կայծերի» ամբողջ գործողութիւնները առել է ուրիշ վէպերից, որովհետև այստեղ էլ մարդիկ ուտում են, խմում են, խօսում են, պառկում են, այստեղ էլ մարդիկ երկու աչք, երկու ոտ ունեն։ Եւ այդ բոլորը նա համարում է կրիտիկա։

Այժմ դառնանք այն կէտերին, որոնցմով պ. Հայկունին «Կայծերի» մէջ անբնական երևոյթներ և գործողութիւններ է ցոյց տալիս։

Ֆարհատը և Մարօն սենեակի մէջ մէկ մէկու հետ խօսում են. այդ միջոցին բակից լսելի է լինում շան կընձկընձոցի ձայնը։ Օրիորդը և Ֆարհատը սենեակից դուրս են վազում, որ տեսնեն ինչ

գուցեալի ջերմ, քրանաջանը ծառայութիւն ճշմարտութեանը, բարութեանը, գեղեցկութեանը, հայրենիքին, մարդասիրութեանը. ճառը վերջացրեց դառնալով դէպի հին գրողները խնարհված գերեզմանի վրա „. իսկ մեզ, անցած-գնացած հներիս, մնում է միայն բացականչել. մնա՛ս բարեաւ բարեկամ, մինչև քեզ հետ շուտով տեսութեան:“ Այս խօսքերը ընդհատվում էին արտասուալից հառաչանքերով:

Պլեշչեև արտասանեց կարճ ողբերգական (էլեգիական) բանաստեղծութիւն—յիշելով Տուրգենեվի մասին, որպէս մի իմաստուն Ջատագովի գիւղացիների ազատութեան: Ճառերը վերջանալուց յետոյ ժողովուրդը փոքր առ փոքր ցրվեցաւ. պակները այնտեղ և եթ կոտոր կոտոր արին և տարան ի յիշատակ: Թաղման հանդէսը սկսվեցաւ առաւօտեան ժամի 8-ին, վերջացաւ $3^1/_2$ ժամին ճաշից յետոյ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սատանը չնորհակալութեամբ «Մայրենի լեզուի քերականութեան տարերքը», աշխատասիրութիւն Նիկողայոս Տեր-Ղևոնդեան: Գիրքը տպված է 3ովհ. Մարտիրոսեանի տպարանում և արժէ 50 կոպէկ:

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային դումայի հոկտեմբերի 3-ի նիստի մէջ քաղաքագլուխ Մատինով առաջարկեց ձայնաւորներին պատուել իշխան Եաղօն Թումանովի յիշատակը ընդհանուր վերկենալով, աւելացնելով, որ հանդուցեալը ընդհանուր սէր և յարգանք էր վայելում որպէս քաղաքագլուխ, 1870 թուից մինչև 1875 թիւը իր պաշտօնավարութեան ժամանակ: Դուման վճռեց, որ հանդուցեալի թաղման ժամանակ ներկայ կը գտնվեն բոլոր ձայնաւորները և արհեստաւորների բոլոր հանքարները, իրանց դրօշաւորով:

„Русскій Курьеръ“ լրագրում կարդում ենք, Տուրգենեվի թաղման նկարագրութեան մէջ, որ «Արձագանքից», «Մշակից» և կովկասեան ռուս լրագիրներից պակները առնող պատգամաւորները հագնված էին կովկասեան ազգային շորերով, սրերով և խանչալներով:

—

„Кавказъ“ լրագիրը տպել է մի պատասխան «Մշակի» № 115 մէջ տպված այն նկատողութեան, որ պրոֆէսսոր Անդրէաս Արծրունի անելով փորուածքներ Սամթաւրօի մէջ, գտաւ մի քանի թանգագին քարեր, որոնց վրա փորագրված էին այլ և այլ պատկերներ: Մենք այն միտքը յայտնեցինք, որ այդ տեսակ քարեր, որքան մեզ յայտնի է, առաջին անգամ են գտնվում: Ռուս լրագիրը պատասխանում է, որ այդ տեսակ պատկերներով թանգագին քարեր գերեզմանների մէջ գտել է թէ պ. Բայէրն, թէ պ. պ. Ֆիլիմոնով և Վիրուբով: Իսկ 1880 թվին պ. Երիցով գտել է այդ տեսակ դէմմաններ օնիկսից այն տեղում, Երևանեան նահանգում, որտեղ ենթադրում են թէ եղել է հին հայոց Արմաւիր քաղաքը:

—

Տպարանի և դրաշարների մէջ եղած անհամաձայնութեան պատճառով, «Մշակի համարները շարող դրաշարները բոլորն էլ դուրս եկան տպարանից և այժմ «Մշակը» շարելու համար կանգնեցրած են կատարելապէս խամ դրաշարներ, այնպէս որ «Մշակի» համարները անդադար ուշանում են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Vossische Zeitung լրագրի խօսքերով, Փարիզի անցքերի առիթով Վիլհէլմ կայսրը հեռանալ հեռագրին ուղարկեց Ալֆոնս թագաւորին: «Յաւում եմ, որ Փարիզում ձեզ վիրաւորեցին: Սակայն, ես գիտեմ, որ այդ վիրաւորանքը առաւել իմ դէմ է ուղղված, քան ձեր դէմ»:

—Փարիզի «Figaro» լրագրին հաղորդում են, որ սեպտեմբերի 22-ին սպանիական դեսպանը Փարիզի մէջ ստացաւ Մադրիդից պաշտօնական մի շրջաբերական, որով սպանիական արտաքին գործերի մինիստրը ցանկութիւն է յայտնում կատարեալ բաւականութիւն ստանալ սպանիական թագաւորին հասցրած վիրաւորանքի համար: Սպանիական մինիստրը նկատում է, որ 1) ֆրանսիական կառավարութիւնը այդ գործի վերաբերութեամբ հարկաւոր կարգադրութիւններ չարաւ, 2) նա դատաստանական հալածանքի չենթարկեց այդ կոպիտ ցոյցին մասնակցողներին, 3) «Journal officiel» լրագրի մէջ այդ առիթով տպված նկատողութիւնը բաւականացուցիչ չէ կարելի համարել և 4) որ «Հաւասի» գործակալութիւնը ուղղակի պաշտօնական օրգան չէ: Վերև յիշվածների հիման վրա սպանիական մինիստրը յոյս ունի, որ ֆրանսիական կառավարութիւնը, պախարակելով պատահած ցաւալի ցոյցը, կը կարողանայ գործը սպանիական ժողովրդի համար բաւականացուցիչ կերպով վերջացնել: Սպանիական դեսպանը ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի հետ տեսնվելուց յետոյ, հեռագրեց Մադրիդ, որ ֆրանսիական կառավարութիւնը համակրութեամբ ընդունեց այդ շրջաբերականը:

—Ֆրանսիական լրագիրներին հաղորդում են Մադրիդից, որ Մադրիդի համալսարանի ուսանողները պալատը կերթան ի պատիւ թագաւորի ցոյցեր գործելու նպատակով: Սպանիական թագաւորին փարիզ ուղեկցող անձինք հաւատացնում են, որ սեպտեմբերի 17-ի ցոյցերը Փարիզի մէջ աւելի ընդարձակ էին, քան թէ ենթադրում էին սպանիական լրագիրները: Մադրիդի մէջ բնակվող ֆրանսիացիների բողոքը լցված է բազմաթիւ ստորագրութիւններով: Շուտով այդ բողոքագիրը կը ներկայացվի թագաւորին: Ժանդարմները թոյլ չը տուին սպանիական ուսանողներին մօտենալ ֆրանսիական դեսպանատանը, որտեղ նրանք կամենում էին ցոյցեր գործել: Գաւառական լրագիրները բողոքում են Մադրիդի մէջ ֆրանսիայի դէմ գործած ցոյցերի առիթով:

—«Evenement» լրագիրը հաղորդում է Գրեվիի և Ժիւլ Ֆերրիի խօսակցութեան բովանդակութիւնը: Ժիւլ Ֆերրի գնաց Ելիսեան պալատը Գրեվիին գործերի դրութեան հետ ծանօթացնելու համար: Նա ասեց, որ իր ընկերներից շատերը պախարակում էին սպանիական թագաւորի պաշտօնական ընդունելութիւնը, այնպէս որ նրանցից մէկը, պատերազմական մինիստրը, հարկաւոր համարեց չը մասնակցել այդ ընդունելութեանը: Այնու ամենայնիւ, Ֆերրիի կարծիքով, նա գործել է ինչպէս հարկն է: Մինչև անգամ պատահածից յետոյ կառավարութիւնը քաղաքավարի վարվեցաւ դրացի երկրի ներկայացուցչի հետ: Հաւատացնում են, որ հանրապետութեան նախագահը ցաւելով գնաց Ալֆոնս թագաւորին դիմաւորելու համար և նրան անբաւականութեամբ իր մօտ ընդունեց: Գրեվի ընդհատեց Ֆերրիին, ասելով, թէ նա ոչինչ անբաւականութիւն չը ցոյց տուեց: Այնուհետև Ֆերրի ակնարկեց, որ Գրէվի պէտք է հեռացնէ պալատից Վիլսոնին, իր փեսային: Այդ խօսքերը սաստիկ յուզեցին Գրեվիին և նա պատասխանեց, թէ իրանից պահանջում են բաժանվել իր աղջկանից: Գրէվի աւելի շուտով կը հրաժարվի նախագահի պաշտօնից, քան թէ կը բաժանվի իր աղջկանից: Նա իր ամբողջ կեանքը նուիրել է հանրապետութեանը, բայց բաժանել նրան իր աղջկանից անգթութիւն կը լինէր: Այնուհետև Ֆերրի խօսեց իր հրաժարականի մասին, իսկ Գրէվի առաջարկեց նրան մնալ մինչև պատգամաւորների ժողովի դումարվելը:

—Սերբիական թագաւորը իր ճանապարհորդութիւնից վերադառնալով ընդունեց Պերօչանցի մինիստրութեան հրաժարականը և յանձնեց Խրիստիչին նոր մինիստրութիւն կազմել: Տպելով նոր մինիստրութեան ցուցակը, «Politik» լրագիրը նկատում է, որ նա բաւական անդոյն է: Նախկին մինիստրութիւնից միայն մէկը՝ պատերազմական մինիստրը մնաց իր պաշտօնի մէջ:,

—Լայպցիգի «Tagblat» լրագիրը հաղորդում է, որ կայսերական բարձր դատարանը, քննելով Մեցի պատգամաւոր Անտուանի գործի մասին դոկումենտները, վճռեց, որ նախապատրաստական քննութիւն կատարվի: Այժմ ասում են, որ Անտուան կալանաւորված է ոչ թէ կայսերական պրոկուրորի, այլ Մեցի դատաւորի կարգադրութեամբ: Բերլինի կիսապաշտօնական «Post» լրագիրը շատ բաւական է Անտուանի կալանաւորութեամբ և այն կարծիքի է, որ այդ կալանաւորումը լաւ նշան է այն մտքով, որ կառավարութիւնը հարկաւոր է համարում ռանդոտ քաղաքականութեան հետևել Էլզաս-Լոտարինգիայի մէջ:

—«Times» լրագիրը ասում է, որ Սպանիան կարող է բաւականանալ Եւրոպայի արտայայտած համակրութեամբ և ներողութիւններով, որ ներկայացրին Գրէվի և Ֆերրի: Այնուամենայնիւ լրագիրը խորհուրդ է տալիս պաշտօնապէս տպել այն ներողութիւնները, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահը ներկայացրեց սպանիական թագաւորին: Վերջը լրագիրը նկատում է,

---

Է պատահել (եր. 330): Պ. Հայկունին այդ անբնական է համարում:

Ֆարհադը յուսահատութիւնից գիշերը գնում է գետի մօտ, պատրաստվում է գետը ընկնել և խեղդուել: Այդ միջոցին պատահում է նրան իր 12 տարի առաջ անյայտացած ընկերը, Կարօն, և թոյլ չէ տալիս (եր. 85): Պ. Հայկունին այդ անբնական է համարում:

Կարօն Ֆարհադին տանում է մի աւերակ մինարէթ: Գիշերը մութն է: Այդ միջոցին դուրս է գալիս լուսինը և լուսաւորում է նրանց ճանապարհը (եր. 86): Պ. Հայկունին այդ անբնական է համարում, երևի, մտածում է, թէ Պարսկաստանում լուսին չը կայ:

Բայց նշանաւորն այն է, որ պ. Հայկունին „Կայծերի“ մէջ անբնական գործողութիւններ ցոյց տալու համար՝ իր բերած փաստերը աղաւաղում է:

„Կայծերի“ մէջ (եր. 152) նկարագրված է, թէ ինչպէս Ֆարհադ մանուկը նստած մերկ, առանց սանձի ձիու վրա, բռնում էր նրա բաշից և արագութեամբ պ ա ր տ ե ց ն ո ւ մ էր, այսինքն ման էր ածում: Պ. Հայկունին «պարտեցնել» բառը դիտմամբ ուրիշ իմաստով է բացատրում, որպէս զի ցոյց տայ, որ Ֆարհադը բռնած ձիու բաշից, գնդակի նման իր ձեռքի վրա պարտեցնում էր: Ի հարկէ, եթէ Ֆարհադ մանուկը Հերքուլէս ևս լինէր, դարձեալ այդ շատ անբնական կը լինէր ձիուն ձեռքի վրա պարտեցնել: Բայց քանի որ նա լինքը նստած էր ձիու վրա, այլ ևս ինչպէս կարող էր ձեռքի վրա պարտեցնել ձիուն: Շատ հասկանալի է, որ պարտեցնել բառը ման ածելու մտքով է գրված:

Բացի վերոյիշեալ օրինակից, պ. Հայկունին ուրիշ օրինակներ էլ է բերում, որ ցոյց տայ, թէ Բաֆֆին իր հերոսներին Հերքուլէսի ուժ է տալիս:

«Մըհէի համար մի ահագին քարը մի տաշեղ է», ասում է նա (եր. 351): Այդ քարը սովորաբար գիշերները գնում էին որսորդ Ավօի բակի դռան ետևում, որ դուռը չը կարողանան դրսից բաց անել: Որսորդի աղջիկը, Մարօն, կարողանում էր նոյն քարը երկու ձեռքով բարձրացնել: Ուրեմն այստեղ ինչ անբնական մի բան կայ, որ նոյն քարը հսկայ Մըհէն կարողանար տաշեղի նման շարժել: Բայց պ. Հայկունին Մարօի գործողութիւնը դիտմամբ թագցնում է, որ Մըհէի գործողութիւնը չափազանց ցոյց տայ:

Նոյն հսկայ Մըհէն իր լախտի մի հարուածով ջախջախից շան գլուխը և ուղեղը դուրս թափեց (եր. 330): Պ. Հայկունին այդ անբնական է գտնում: Շատ հովիւներ իրանց մահակի մի հարուածով շան գլուխը ջախջախում են:

Նոյն հսկայ Մըհէն մանում է որսորդական վիրապը և զսպում է թակարդի մէջ ընկած գազանին (եր. 50): Պ. Հայկունին այդ անբնական է համարում: Ես էլ անբնական կը համարէի, եթէ «Կայծերի» մէջ այնպէս նկարագրված լինէր, որպէս պ. Հայկունին է ցոյց տալիս: Նա գողանում է խեղճ Մըհէից նրա գլխաւոր զէնքը, ա հ ա գ ին ե ր կ ա թ է մ ա հ ա կ ը, և նրան առանց զէնքի թողնում է գազանի հետ կռուելու: Ի հարկէ չէր կարող զսպել նրան: Բայց Բաֆֆին իր հերոսի ձեռքում զէնք էր տուել, այդ զէնքը ինչու թագցրիք, պ. Հայկունի:

Բայց պ. Հայկունու վերոյիշեալ նկատողութեան մէջ մի ուրիշ շատ հետաքրքիր կէտ կայ: Նա ասում է, թէ ինքն կարդացել է, որ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը և Դանիէլ մարգարէն իրանց աչքերով էին մանրիսացնում վիրապի օձերին և գուբի առիւծներին և այսպիսով զսպում էին նրանց: «Մըհէի աչքերումն էլ մանրիսական զօրութիւն չը կար արդեօք», հարցնում է նա: Ես զարմանում եմ, որ այդ տողերը տպվում են Հայաստանեայց սուրբ եկեղեցու պաշտպան թերթի մէջ: Արդեօք այդ եկեղեցու հիմնադիր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զուրկ էր հրաշքներ գործելու զօրութիւնից և միայն մանրիսացնելով էր զսպում գազաններին:

Եւ այսպէս իր նկատողութիւնների մէջ պ. Հայկունին բոլորովին ներելի է համարում իրողութիւնները սխալ կերպով պատմել, փաստերը յեղաշրջել, բնագիրը աղաւաղել, որպէս զի, կարողանայ իր ցանկացած հետևանքը դուրս բերել: Ահա մի օրինակ ևս.

„Զումրուտ տատը Կարօին յայտնում է նրա հօր (ոչ թէ հօր, այլ մօր) կտակը, ուխտը: Բաւական երկար և ոգևորված կերպով խօսելից յետոյ՝ հիւանդ պառաւը, վերջապէս «հ ո գ ի ն ա ւ ա ն դ ա ւ մ է ն», որ սովորաբար նշանակում է մեռնել, բայց պ. Բաֆֆին այդ բառերը այլ կերպ է հասկացել: „Հ ո գ ի ն ա ւ ա ն դ ե լ ի ց“ յետոյ Զումրուտ տատը նորից շարունակում է դրեթէ մի ամբողջ երես խօսել և յետոյ վերջապէս «մ ե ռ ն ո ւ մ է» (եր 126—128):

Ես կը բերեմ Զումրուտ տատի պատմութիւնից այն կտորը, որտեղից պ. Հայկունին դուրս է բերել «հ ո գ ի ն ա ւ ա ն դ ե ց» բառերը, որ ցոյց տամ, թէ մեռնողը ով է:

«Այն սարսափելի կոտորածի միջոցին (պատմում է Զումրուտ տատը) քո մայրը, Կարօ, կուրծքից խէնջարով խոցված, մի ձեռքով բռռնել էր վէրքը, միւս ձեռքով քեզ յանձնեց ինձ, ասելով. «Առ, Զումրուտ, եթէ Աստուած կը յաջողէ ազատել երեխային, սովորեցուր նրան վրէժխնդիր լինել»... Այդ խօսքերի հետ նաղելի տիկինս ա ւ ա ն դ ե ց հ ո գ ի ն» (եր. 126—128):

Հիմա նայեցէք, պարզ երևում է, որ հոգին ա ւ ա ն դ ող ը Զումրուտ տատի «նաղելի տիկինն» էր, այսինքն Կարօի մայրը, և ոչ թէ ինքը Զումրուտ տատը: Երկուսից մէկը, կամ պ. Հայկունին մի ծիսական դպրոցի առաջին դասատան աշակերտի չափ հասկացողութիւն չունի, որ ըմբռնէ իր կարդացածը, կամ այնքան անազնիւ է, որ անբարեմտութեամբ աղաւաղում է վէպի բնագիրը: Ես հակված եմ ընդունել վերջինը: Պարոնին չէ կարելի այն ասուիճան անգրագէտ համարել, որ նա չը հասկանայ, թէ ով է մեռնողը, կամ ով է մեռնողի մասին պատմում: Բայց նա իրան թոյլ է տալիս աղաւաղել բնագիրը, յոյս դնելով իր ընթերցողների միամտութեան վրա, որ կը հաւատան նրան և նրանցից ոչ ոք չի բաց անի «Կայծերը» ու համեմատութիւն չի անի իր ասածի հետ, և այսպիսով առժամանակ իր ստախօսութիւնը առաջ կը քշէ ու «Կայծերի» վրա ստուեր կը ձգէ, բայց պարոնը չէ մտածել, որ կը գտնվեն մարդիկ և ցոյց կը տան նրա խարդախութիւնը:

Պ. Հայկունին իրան նպաստաւոր է համարում մինչև անգամ «Կայծերի» մէջ գտնված ծաղրական կամ հեգնութեամբ ասած խօսքերը ընդունել որպէս ճշմարտութիւն և նրանցից իր ցանկացած եզրակացութիւնը դուրս բերել: Օրինակ, Ֆարհադը հարցնում է Սագօից իրանց մի երրորդ ընկերի, Հասօի, մասին թէ ինչ է չինում նա: Սագօն պատասխանում է.—«Գրողը տանի նրան, հիմա տուն ու տեղի տէր է դարձել, վար է վարում, ցանք է անում, կնիկ ունի. ամեն տարի երկու հատ ծնվում են, տունը լիքն է երեխաներով, ճանճերի նման վըժվըժում են» (եր. 156):

Պ. Հայկունին այդ խօսքերից դուրս է բերում այն միտքը, որ Հասօի կինը «խոզի ցեղից» է եղել, որ կարողացել է ամեն տարի երկու հատ զաւակ ծնել: Զզուելի է:

Խօսակցութեան մէջ, մանաւանդ հեգնական խօսակցութեան մէջ, այս տեսակ ասացուածները կարելի է պարզել հետևեալ օրինակով. Ես ասում եմ, որ տիրացու Գեղամը ամեն մի բոզէում եօթանասուն և եօթն անգամ սուտ է խօսում: Այդ չէ նշանակում, որ ոչ մի անգամ չէ պատահել, որ տիրացու Գեղամը եօթանասուն և եօթն անգամից պակաս սուտ խօսէր: Այլ այդ նշանակում է, որ նա չափազանց ստախօս է: Այնպէս էլ, Սագօի խօսքերից երևում է, որ Հասօի կինը բազմածին է և ոչ թէ «խոզի ցեղից»:

Այս բոլորից յետոյ հասկանալի է, թէ ինչ արժէք պէտք է տալ պ. Հայկունու կրիտիկային, հիմա դառնանք նրա մի քանի այլ նկատողութիւններին:

Ո՛րքան մեծ զժուարութիւնների պիտի հանդիպի վիպասանը, երբ ձեռնարկում է մեր ազգային թէ ներկայ և թէ անցեալ կեանքից մի վէպ գրելու: Մեր գրականութիւնը վիպասանի համար համա-

«Եթէ Ֆրանսիան Եւրոպայի մէջ թշնամիներ ունի, նա ունի նաև բարեկամներ, որոնց թւում լինելը Անգլիան ցանկանում է: «Standard» լրագիրը բաւականութիւն է յայտնում պատերազմական մինիստր գեներալ Տիբօդենի հրաժարականի առիթով և խորհուրդ է տալիս Սպանիային այլ ևս բաւականութիւն չը պահանջել: Daily News» լրագիրը իր կողմից նոյնպէս խորհուրդ է տալիս տպագրել Ժիւլ Ֆերրիի ներողութիւնները և չը գիտէ, թէ այլ ևս ինչ բաւականութիւն կարող է պահանջել Սպանիան Ֆրանսիայից:—Դատելով վերջին անցքերի մասին սպանիական «El Liberal» լրագիրը ասում է. «մենք գերմանացիներ կամ ֆրանսիացիներ չենք, այլ սպանիացիներ: Մենք ոչ մեծ դաշնակցութիւններ ենք ցանկանում և ոչ էլ անմիտ պատահարներ: Սպանիան լատինական բաստային է պատկանում և ոչինչով նման չէ Գերմանիային: Այդ երկու ազգութիւններին ամեն բան բաժանում է: Ընդհակառակը Ֆրանսիան և Սպանիան միացրած են բաստայի միութեամբ, միակերպ ձգտումներով և իրանց եղբայրութեամբ: Ֆրանսիան պատում է մեր գրողներին և արտիստներին, նա լալիս էր մեր դժբաղդութեան ժամանակ: Այնուամենայնիւ լրագիրը յիշում է այն ժուժարութիւնները, որոնք ծագեցին Գերմանիայի հետ առևտրական դաշնագիր կապելու ժամանակ և այն առաւելութիւնները, որ տալիս է Ֆրանսիայի հետ կապած նոյնպիսի դաշնագիրը: Ֆրանսիան, շարունակում է լրագիրը, Սպանիային քոյր է անուանում և ցաւում է Փարիզի մէջ պատահած ցոյցերի պատճառով, մինչդեռ Գերմանիան գործադրում է Սպանիային իբրև մի գործիք իր օգտին:»

—Իտալական լրագիրները տպեցին Փարիզից ստացված հետևեալ հեռագիրը: Հատատ աղբիւրներից հաղորդում են, Լօնդօնից հասաւ Փարիզ լորդ Լէյօնս յանձնարարութեամբ բանակցել Ֆրանսիական կառավարութեան հետ հանրապետութիւնը միացնելու համար Գլադստոնի կապած անգլօ-ռուսական դաշնակցութեան հետ: Այդ երեք պետութիւնների դաշնակցութիւնը մըտադիր են դիմադրել Իտալիայի, Աւստրիայի և Գերմանիայի դաշնակցութեանը, եթէ եւրոպական պատերազմ պատահի, որին սպասում են 1884 թուականի գարունքին:

—Վիեննայի «Deutsche Montagslbatt» լրագիրը հաղորդում է. «Լեհացիների ցանկութիւնը լեհական առանձին զօնդ կազմել լեհական զինաւորութեամբ և հրամանատարութեամբ լեհական լեզուով, որը, եթէ պատերազմ պատահի, պէտք է գործէ իբրև առանձին զօրաբաժին, համակրութեամբ չէ ընդունվում այստեղի կառավարական շրջանների մէջ: Այս պատճառով յուսալի չէ, որ այդ ցանկութիւնը իրագործվի»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անատոլի Տրօլլօպ թողեց իր ինքնակենսագրութիւնը, որ շուտով լոյս կը տեսնի: Տրօլլօպ իր ինքնակենսագրութիւնը հասցրել է մինչև 1876 թիւը. նա այդ գրուածքի մէջ պարզապէս պատմում է իր յիշողութիւնները իր գրական վաստակների և համոզմունքների մասին: Նրա պատմութիւնը այն սաստիկ աղքատութեան և թշուառութիւնների մասին, որոնց մէջ նա անց է կացրել իր մանկութիւնը, զարմացնում է ամենքին, ով ծանօթ էր նրա հետ վերջին ժամանակներում: Նրա կրած զրկանքները և անբաւականութիւնները փօստային վարչութեան մէջ ծառայելու ժամանակ, նոյնպէս և նրա յաջողութիւնները և արկածները տեսչի պաշտօն ունեցած ժամանակ Իրլանդիայում, շատ հետաքրքիր են և կատարելապէս նոր են հասարակութեան համար: Նա սաստիկ հետաքրքրում է ընթերցողին ոչ միայն որպէս մատենագիր, բայց և որպէս մանաւոր մարդ: Տրօլլօպի այդ ինքնակենսագրութեան մէջ մենք գտնում ենք նրա գրական աշխատութիւններից իւրաքանչիւրի պատմութիւնը, բանակցութիւնները հրատարակիչների հետ, իւրաքանչիւր հեղինակութեան համար ստացված վարձատրութեան չափը և ծանօթանում ենք այն պատճառների հետ, որոնք, նրա կարծիքով, նպաստում էին իր գրուածքների յաջողութեանը կամ թէ վնասում էին վերջիններին: Կարծեմ, որ 1847 թվից, երբ հրատարակվեցաւ նրա առաջին գրուածքը մինչև 1879 թիւը, Տրօլլօպ իր բոլոր հեղինակութիւնների համար ստացաւ մօտ 700,000 ռուբլ: Տրօլլօպի կարծիքները ստեղծական ֆանտազիայի և այն բանի մասին թէ որպիսի տեղ պէտք է գրաւէ նա ժամանակակից գրականութեան մէջ, գտնվում են նրա հետևեալ յօդուածներում. "Վէպերը և նրանց գրելու արուեստը», «Նորագոյն ժամանակի անգլիական վիպասանները», և «Կրիտիկայի մասին»: Ինքնակենսագրութեան մէջ բազմաթիւ անեկդոտներ կան թէ իրան հեղինակի և թէ Անգլիայի շատ ուրիշ հասարակական գործողների և պուբլիցիստների կեանքի:

* * *

Մէկ թուղթ խաղացող մարդու մահը:—Փարիզում այս օրերս փողոցի վրա գտան մի ծերունի մարդու և մօտակայ հիւանդանոցը տարան: Նա այնպէս նուաղած էր, որ չէր կարողանում խօսել և նշաններով ցոյց տուեց, որ ահա երեք օր է արդէն որ առանց կերակուրի է մնացել: Այն ժամանակ նրան տուեցին կաթ և մի փոքր գինի, բայց նա չը կարողացաւ առողջանալ և նոյն օրն և եթ մեռաւ: Երբ որ նրա մասին տեղեկութիւններ հաւաքեցին, յայտնվեցաւ, որ նա նշանաւոր ծագումի մարդ է և իր ժամանակ մեծ կարողութիւն ունէր, բայց նա վաղուց արդէն իր բոլոր հարստութիւնը կորցրել էր թղթախաղում: Ասում են, որ նա, 1861 թվին, մի գիշերում տանուլ տուեց Բադէն-Բադէնում 300,000 ֆրանկ: Իր բոլոր հարստութիւնը կորցնելով, նա կարեց բոլոր կապերը իր ընտանիքի հետ և ընկաւեց մուրացկանութիւն անել Լօնդոնում, բայց մուրացկանութեամբ հաւաքած բոլոր փողերը խլոյն և եթ տանում էր և տանուլ էր տալի ամենատոր տեսակի գինետներում: Նրան թաղեցին փարիզի Պէր-Լաշէզի գերեզմանատանը, ընտանեկան դամբարանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 հոկտեմբերի: Երէկ Նոցա Կայսերական Մեծութիւնները թագաժառանգի և ամբողջ Ընտանիքի հետ բարեհաճեցին Պետերգոֆից գաւչինս տեղափոխվել բնակութեան համար: Էգուց 1881 թ. մարտի 1-ի աղեսի տեղը կը կայանայ տաճարի հիմնադրութիւն Յիսուս Քրիստոսի Պայծառ Յարութեան անունով: Առաւօտեան 11 ժամին զանգահարութեամբ բոլոր եկեղեցիների մէջ կաղանի մայր-եկեղեցուց կուղևորվի թափօրը միտրապօլիտի առաջնորդութեամբ և հիմնադրութեան տեղի շուրջը զօրքեր կը կանգնեն: Ժամի 12-ին թագաւոր կայսրը կը բարեհաճի գալ այդտեղ և այնուհետև մաղթանք կը սկսվի, որի վերջանալուց յետոյ տաճարի հիմքի դծերը կը սրսկվեն օրհնած ջրով և թագաւորին կը ներկայացնեն ոսկէ մեդալ ի յիշատակ Կայսր Ալէքսանդր II-ի մահուան և ոսկէ ու արծաթէ դրամներ ի յիշատակ Նրա 25 ամեայ թագաւորութեան: Թագաւորը կը բարեհաճի հիմքի սեղանում շինած արկղի մէջ դընել նրանց և հիմքի առաջին աղիւսը կը դնի, իսկ նրանից յետոյ աղիւսներ կը դնեն թագաժառանգը և Կայսերական Ընտանիքի միւս անդամները: Հանդիսին ներկայ կը լինեն առաջին և երկրորդ կարգի պալատականները, առաջին երեք կարգի բարձրաստիճան անձինք, Նոցա Մեծութիւնների և Բարձրութիւնների սվիտաները, տեղական ազնուականութեան, զեմստվոյի, քաղաքային վարչութեան և վաճառականների ներկայացուցիչները: Այդ օրը բոլոր եկեղեցիների մէջ Հանդուցեալ Թագաւորի հոգեհանգիստը կը կատարվի: Ս. Պետերբուրգի դատաստանական պալատայի պրոկուրորը յայտնում է, որ Սարա Բեկկերի սպանութեան գործի պատճառով դեռ ևս ոչ թէ միայն ոչ ոք չէ ենթարկված դատաստանի, այլ գործը այնքան խառն է, որ քննութիւնն անգամ չէ վերջացած: Լրագրական հաղորդութիւնները նոր յայտնութիւնների մասին այդ գործի վերաբերութեամբ ճիշդ չեն: Առհասարակ ամեն տեսակ նախաժամ հաղորդութիւններ միայն վնասում են քննութեան աջողութեանը: Լրագիրները հաղորդում են, որ արևմտեան երկրում դատաստանական վերանորոգութիւնները մտցնելու պատճառով Ս. Պետերբուրգի դատաստանական պալատայի պրոկուրոր Մուրավիեվին յանձնված է քննել հին դատարանները հետևեալ նահանգների մէջ՝ Վիլնօ, Կովնօ, Գրոդնօ, Մինսկի, Մոգիլէովի և Վիտեբսկի: Օրերում հաստատված կանոնների հիման վրա նոր հաւաքված զինուորների դասաւորութիւնը կը կատարեն ոչ թէ հաւաքման կետերում, այլ զաւառական զինուորական կառավարիչները:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ռեա ոչինչ պաշար չէ պատրաստել, որ նրա աշխատութիւնը հեշտացնէ: Իմ խօսքը գլխաւորապէս տաճկաց և պարսկաց հայերի մասին է: Մենք չունենք այդ երկրների նոր քարտէզն անգամ, մենք չունենք լաւ հետազօտված էտնոգրաֆիական գրվածքներ այդ երկրների ազգաբնակութեան մասին,—մենք համարեա ոչինչ չունենք, ինչ էլ որ ունենք, բոլորը թերի, անկատար, խառնիխուռն և երկբայական են: Վիպասանը ստիպված է անձամբ ճանապարհորդել և ուսումնասիրել բոլորը: Իսկ այդ ամեն վիպասանի հաղիւ կը յաջողվի: Մինչդեռ մի եւրոպացի գրող իր կաբինետի մէջ կարող է ձեռքի տակ ունենալ այն բոլոր գրքերը, ինչ որ նրան պէտք են: Հարիւրաւոր մարդիկ նրա համար աշխատել, նրա գործը հեշտացրել են:

Զը նայելով այդ բոլոր դժուարութիւններին, «Կայծերը» ներկայացնում է մեզ որպէս կատարեալ նկարագիր իր պատմական, էտնոգրաֆիական և աշխարհագրական ճշտութիւններով, որովհետև հեղինակը անձամբ ուսումնասիրել է բոլորը:

Բայց պ. Հայկունին ցոյց է տալիս թւով 22 սխալներ, աւելացնելով, թէ «Ես հաւատացած եմ, որ պ. Բաֆֆին այս և այսպիսի սխալանքներ (որոյ բոլորը ես առաջ չը բերի) չէր անել, եթէ այդ պատմական և աշխարհագրական կէտերի վրայ խօսելիս՝ մի փոքր աշխատութիւն տար իրան պէտք եղած մի քանի գրքերից (??) և քարտէզներից (??) տեղեկութիւններ հաւաքել և ստուգել» և այլն:

Եթէ պ. Հայկունին կամենում է, որ հաւատային իրան, թէ նրա նկատած սխալները իրաւ սխալներ են, անպատճառ հարկաւոր էր, որ փաստերով ապացուցանէր, թէ իր նկատողութիւնները որ գրքերի և քարտէզների հետ է համեմատել և անճիշտ է գտել: Նա ապացոյցներ չէ բերում, և կարծում է, թէ կը հաւատան, որ նրա ասածները ուղիղ են, իսկ «Կայծերի» մէջ գրուածը սխալ է: Այսպէս չեն քննադատում. մի փաստ հերքելու համար՝ պէտք է ուրիշ փաստ առաջ բերել:

Ես մի առ մի կը վեր առնեմ պ. Հայկունու առաջ բերած 22 նկատողութիւնները և ցոյց կը տամ, որ պ. Հայկունին, այդ դէպքում ևս, ոչ միայն չէ հիմնվում որ և իցէ գրական փաստի վրա, այլ խարդախութեամբ կամ աղաւաղում է վէպի ընդարձը, կամ իր ընթերցողներին մոլորեցնելու համար խաբուսիկ միջոցների է դիմում:

1. «Իր (երկրագործ Հասօի հայրը գնել էր այդ հողը մի քուրդ բէգի այրի կնոջից» (213), մինչդեռ յայտնի է, որ քուրդը սեպհական հող չունի իսկապէս: Դրա մի ապացոյցն էլ նոյն իսկ հեղինակի իրան խօսքերն են մի այլ տեղում թէ «քրդերը կալուածատէրներ չէին» (286):

Զնչին բծախնդրութիւն: Ինչ է ուզում ասել գրանով պ. Հայկունին,—այն, թէ Բաֆֆին մի տեղում գրել է, թէ Հասօի հայրը այդ հողը գնել էր մի քուրդ բէգի այրի կնոջից, իսկ մի այլ տեղում ասում է, թէ քրդերը կալուածատէրներ չէին, ուրեմն, եթէ քրդերը կալուածատէրներ չէին, ինչպէս կարող էին հող վաճառել: Ըստ երևոյթին պ. Կրիտիկոսի այդ նկատողութիւնը ճիշտ է և ցոյց է տալիս Բաֆֆիի հակասութիւնը: Բայց նայեցէք, խարդախութիւնը ինչումն է. «Քրդերը կալուածատէրներ չէին» բառերը նա վեր է առնում մի նախադասութիւնից, և թողնում է նոյն նախադասութեան մնացած բառերը մինչև վերջակէտը: Ինչու: Որովհետև եթէ ամբողջ նախադասութիւնը վեր առնելու լինէր, դուրս կը գար, որ քրդերը կալուածատէրներ էին: Ահա ամբողջ նախադասութիւնը. «Բայց քրդերը կալուածատէրներ չէին, նրանց մէջ աղաներից մէկը սեպհականացնում էր սրի ուժով մի կտոր հող, միւս աղան, աւելի զօրեղ գտնվելով, խլում էր նրա ձեռքից, և այսպէս հողը անդադար անցնում էր մի աղայից դէպի միւսը» (286): «Կայծերի» մէջ ամբողջ ԻԵ-րդ գլուխը (260—270) նուիրված է քրդերին և թուրքերին, և այդ գլխի մէջ մանրամասն կերպով բացատրված է թէ առաջինների և թէ վերջինների կալուածատիրական պայմանները: Մի թէ կարելի է ամբողջ գլուխներից միայն երեք բառ վեր առնել և նրանց վրա հիմնել իր կարծիքը: «Կայծերի» նկարագրած ժամանակներում քրդերը ոչ միայն մանաւոր կալուածատէրներ էին, այլ ամբողջ գիւղերի և գաւառների տէրեր էին: Խան-Աբդալները, Խան-Մահմուդները, Բադիր-խան բէկը, Նուրուլլահ-բէկը դեռ մինչև 1850 թւականները տիրապետում էին մի և նոյն երկրներին, ուր գործում են «Կայծերի» հերոսները:

2. «Ցայտնի է նմանապէս, որ քրդերը ունին խալիֆաներ, և ֆախիները, այլ ոչ թէ «մուֆթիներ և դաղիներ» (269):

Պարոնը չը գիտէ, որ մուֆթիները և դաղիները կառավարութիւնից նշանակված դենպետներ են, գլխաւորապէս դատական (չառեաթի) գործերի համար: Նրանց հպատակվում են ինչպէս քրդերը, այնպէս էլ սունի աղանդին պատկանող բոլոր մուսուլմանները:

3. «Որ մահմեդականութիւն ընդունող քրիստոնեաները ոչ պարսկական, ոչ էլ տաճկական օրէնքով, երբէք իրաւունք չունեն—ինչպէս այդ պնդում է պ. Բաֆֆին—«տէր դառնալ աղջկանների թէ շարժական և թէ անշարժ ժառանգութեանը» (280):

Պ. Հայկունին իր այդ խօսքերը այն աստիճան վստահութեամբ է արտասանում, կարծես, տարիներով ուսումնասիրել է պարսկական և տաճկական օրէնքները: Պարոնի տգիտութիւնը ցոյց տալու համար, ես կը բերեմ մի քանի ապացոյցներ մեր պատմագրներից, որ Բաֆֆին բանաստեղծութեան մէջ ևս հաւատարիմ է մնացել թէ պատմութեանը և թէ ներկային: Ահա ինչ է գրում այդ մասին Առաքել պատմագիրը իր գրքի գլ. Ե. եր. 66:

«Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողացն. թէ որովհետև նա եկեալ է յօրէնս Մահմեդի, նմա հասանի ամենայն ինչք իւրոց ազգակցաց, և այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս տան ուրացողացն այնոցիկ»:

1880 թւականում Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանքի տպարանում տպվեցան պ. Յարութիւն Տէր Յովհաննեսեանցի հետաքրքիր պատմութեան երկու հատորները, Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի մասին: Այդ պատմութիւնը կարելի է համարել Առաքել պատմագրի չարունակութիւնը մինչև մեր ժամանակները: Նրա առաջին հատորի 366 երեսում կարդում ենք հետևեալը.

«Ծանրակշիռ եղև յոյժ վնասն՝ զոր յուրացուցաց ընկալաւ Ջուղայ (Նոր): Սկզբին այսր աղեսից է ի ժամանակէ երկրորդ Շահ-Աբասայ, ուժգնութիւն՝ ի թագաւորութեան Շահ Սուլթան Հասէյնի, և տեւումն ցմեր ժամանակս: Դենպետք պաշտպան են օրինացն որ հրամայէ զի ինչք և ստացուածք վախճանեալ քրիստոնէի՝ ուրացեալ ազգականի նորա են ժառանգութիւն. այդ իրաւունք ժառանգութեան ըստ ոմանց մինչև ցչորս ազգն (սերունդ) և ըստ ոմանց մինչև ցեօթն ազգն ընտանեաց ուրացողին ունի ներգործութիւն»: Ցետոյ նկարագրում է պատմագիրը, թէ որպիսի բարբարոսութեամբ գործադրվում էր այդ օրէնքը: Մինչև այսօր նոյն բարբարոսութիւնը չարունակվում է մոլլաների ձեռքով, չը նայելով, որ պարսից Շահերը չնորհել են քրիստոնեաներին շատ հրովարտակներ յիշեալ օրէնքի չը գործադրվելու մասին: Շառեաթի մոլեռանդութեան դէմ անզօր գտնվող այդ հրովարտակները պահվում են Թաւրիզի և Սպահանի հայոց առաջնորդարաններում:

(Կը չարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Պ. Մ. ԼԷԲԷԴԻՆՍԿԻ

տեղափոխվեց Սօլօլակկայա փողոց, Սպանդարեանի տունը № 12, կալուածական բանկի դիմաց։

3—10 (2)

Զ. Գրիգորեանցի—Կովկասեան գրավաճառանոցի հրատարակութեամբ լոյս տեսաւ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ յօրինած

„ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ“

անունով աշխատասիրութեան առաջին մասը.—ԱՐՁԱԿ։

Գինն է 1 ռ. 25 կ.

Գումարով առնողներին 1 ռ.

Գիրքը բաղկացած է 470 մեծադիր երեսից։

Մամուլի տակից դուրս եկաւ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԱՆ

ՏԱՐԵՐՔԸ

երկրորդ մասը.

Աշխատասիրեց Ն. ՅԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ։

Գինն է 50 կ.։

Վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում։

Գումարով գնողները 20% զիջումն ունեն։

1—5.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում հոկտեմբեր ամսոյ 12-ին, երեկոյեան 7 ժամին, լինելու է ածուրդ (առանց կըրկնաձրդի) կապալով տալու հին դպրանոցի ներքնայարկի 32 կրպակները։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10-ին մինչև 12 ժամ։

1—3

Մի հայ պատանի ցանկանում է մի ընտանիքում բնակարան և սնունդ ստանալ, որի փոխարէն որոշեալ ժամերում նա կը պարապի տան երեխաների հետ հայոց և ռուսաց լեզուներով, այլ և զանազան առարկաներով։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։ 7—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ հետևեալ ԿԱՅԳԵՐԸ Դէյտվիտեանի Ստատակի Սօվետնիկ ՄԵԼԻՔ—ԱՂԱՄԱԼԵԱՆՑԻ ԵՐԵՒԱՆՈՒՄ։ ա) Տունը, որի մէջ ինքն Աղամալեանն է կենում, նրան կից այգիով, բ) տունը, որի մէջ զետեղված է կաղնաչէյստվօն, գ) Դալմիի արուարձանում գտնվող այգին։

Հարցնել ԳՆԵՐԻ մասին իրան կալուածատիրոջ։ 3—5

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻԶՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ Խ** տեղը կան ամեն ի համար մեծ **ԳՐԻԶՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱ ըիչներ, պենալ, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱԹՈՌ- բարկու կախելու ՏԻՆԵՐ, անոտներ, լուֆիւն **ԱՆԳ- ԱՆՈՒԹ**։ Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կան Թուղթ, տետրակ- ՏԻՏՆԵՐ, քարեդ- ԳՐՁԱԿՈԹ, քսակ- ամաններ, ՄԿՐԱՏ- բոցներ, խալիչա- ՄԱՀՃԱԿԱԼ, վե- համար իրեր, ԳՕ- ՄԱՏՈՒՅԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐ- ՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակ- գլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

53—100

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ դիպվածներում. ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարհանդիսում 1867 թ. ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիվնակի և այլ դեղատներում։

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ տեղափոխվեց իր առաջվայ բնակարանից Սերգիևսկայա փողոցի վրա, Միրզօևի տանը։ Այնտեղ առնում են մանկական գրքեր և ամսագիրներ։

2—4 (1)

ՐԷՅՕԼԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ, Միխայլովսկի փողոցի վրա, տուն Գուրգէնբէկովի № 81, շարունակ ընդունում է աշակերտներին։

9—10 (1)

13-го Октября сего 1883 года, въ день годовщины лечебницы для приходящихъ больныхъ, учрежденной Тифлисскими гражданами, въ память 4-го апрѣля 1866 года, имѣетъ быть въ оной молебствіе, въ 12-ть часовъ утра, о чемъ дирекція оной лечебницы имѣетъ честь увѣдомить для свѣдѣнія желающихъ почтить ее своимъ посѣщеніемъ.

Директоръ лечебницы Д. Лисицевъ.

1—3.

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հետևեալ մէկ արարուածով կատակերգութիւնները.

Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար	35 կ.
Մօդա	40 »
Կռուապատճառը ես էի	55 »
Խէչոյի Թուզը	35 »
Սէր կամ մահ	35 »

Դիմել. ԷՐԻՎԱՆ, Эмину Теръ-Григорянцу.

8—10



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ. .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվօ.	6—23	6—33	Միխայլօվօ.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ. .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. . .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվօ.	1—50	2— 5	Գօրի. . . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվօ.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. . .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . . .	10—24 երեկ.	—

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍ- ՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱ- ՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏ Ի ՍԱ- ՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

55—100

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՒՔ, զանազան ամթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական ամթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Ջեմոգաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակվոյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուրթներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ րէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վէշալկաներ, կշեռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՑ Պօսլով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՅՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (ՕՂԸ կոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**

55—100

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Октября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.